ՍԵՐԿԵՎԻԼ ԳՅՈՒՂԻ ԱՂԱՆԴԻ ՄԱՍԻՆ

Աշոտ Մանուչարյան

Թոնդրակյան հզոր շարժման մարումից հետո հայ աղանդավորությունը մի երկարատև ժամանակաշրջան, շուրջ հազար տարի՝ XI դ. կեսից մինչև XX դ. վերջերը ունեցել է դրվագային դրսևորումներ՝ առանց որևէ էական դերակատարության։ Այդպիսի աղանդավորական առկայծումներից մեկն էլ Սերկևիլի աղանդն է, որն ի հայտ է եկել XVI դարավերջին։ Այդ մասին մենք իմանում ենք Գրիգոր Դարանաղցու ժամանակագրությունից։ Զարմանալի է, որ Թ. Ավդալբեկյանը, խոսելով Մեխլուի աբեղահալածական շարժման ու Թումիկի հերձվածի մասին և առաջինի պարագայում հղելով նաև Գրիգոր Կամախեցուն կամ Դարանաղցուն, չի ակնարկում Սերկևիլի աղանդի մասին[1]։ Այնինչ, պատմիչի հահաղորդածը պակաս կարևոր չէ, ընդհակառակը, առավել համոզիչ ու արժանահավատ է այն պատճառով, որ Սերկևիլի աղանդը ծագել է Դարանաղցու՝ Այրարատ աշխարհ գալու և Սաղմոսավանքում ժամանակավորապես հաստատվելու ընթացքում, հետևապես նրա պատմածը իրազեկ ականատեսի նկարագրություն է։

Սերկևիլ կամ Սերկևելի երբեմնի գյուղը, որի ավերակների մեջ այսօր հառնում է X դ. ս. Գրիգոր Լուսավորիչ խոնարհ եկեղեցին, գտնվում է Արագածոտնի մարզի «Օհանավան գյուղի հյուսիսարևելյան մասում, Քասախ գետի կիրճի աջ եզրին»[2]։

Այդ եկեղեցու մոտից, ըստ Մատթեոս Ուռհայեցու, 1021 թ. սկսվել է հայ-սելջուկյան ճակատամարտը, որի հաղթական ավարտից հետո հեծելազորի սպարապետ Վասակ Պահլավունին բարձրացել է Սերկևիլի լեռը, պառկել մի ժայռի ստվերում՝ հանգստանալու, բայց մարտում ընկած ընկերների անդառնալի կորստից վշտահար՝ քնով է անցել։ Փախստական գյուղացիներից մեկը, ոճրագործ Կայենի նման, ուժգին հարվածով ցած է գցել ու ջարդուխուրդ արել քնած զորավարին[3]։ Ընդ որում, պատմիչը չի նշում, թե որ գյուղի բնակիչ էր ոճ-

---

[1] Տե՛ս **Թ. Աւդալբէկեան**, Անյայտ աղանդաւորներ հայոց մէջ, ԺԶ ու ԺԷ դարերում, Վիեննա, 1926, էջ 4-25։

[2] **Ա. Ասատրյան**, Սերկևիլ գյուղատեղի, «Աշտարակ», 11 ապրիլի, 1991, էջ 4։

[3] **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, գրաբար բնագիրը Մ. Մելիք-Ադամյանի և Ն. Տեր-Միքայելյանի, աշխ. թարգմ. և ներած. Հ. Բարթիկյանի, Երևան, 1991, էջ 18-20։

բագործը։ Բայց դարեր անց էլ սերկևիլցիներն իմացել են, որ դա իրենց նախնիներից մեկի կատարած հանցագործությունն է։

Սիմեոն Երևանցին հաղորդում է, որ XVIII դարում Սերկևիլ գյուղի բնակիչները հողեր են նվիրաբերել Սաղմոսավանքին ու Հովհաննավանքին՝ իբրև ապաշխարանք Վասակ իշխանին հիմարաբար ապանելու համար[1]։

Ինչ վերաբերում է աղանդին, ապա Գրիգոր Դարանաղցին, պատմում է, որ հայոց ՈԽԸ (1599) թվին սերկևիլցի մի գեղջկուհու՝ Քասախ խորաձոր գետի վրա գտնվող տնամերձ այգու կենտրոնում աճող ուռենու վրա Գաբրիել հրեշտակապետի տեսքով երևում է սատանան և պատվիրում, որպեսզի այդ կինը հանուն բարեկեցիկ կյանքի իրենց բակն ուխտատեղի դարձնի, հետևի իր խրատներին, որոնք տալու է՝ նրան ամեն ժամ երևալով, իսկ ինքն էլ կկատարի նրա ու ուխտավորների խնդրանքները և ամենքին քարոզի, թե «մահն որ կայ յերկինս եւ ի գեւղս, նա ես եմ վերակացուն և դու զոր խնդրես, ոչ գրեցից առ ի մահ»[2]։

Թեև պատմիչն իր այս հաղորդածի կապակցությամբ մանրամասների վրա կանգ չի առնում, սակայն հարկ է ուշադրություն դարձնել մի շարք հանգամանքների, նախ, աղանդը երևան գալու ժամանակին, որ փրկչական թվականով անում է 1599, այսինքն՝ վերջանում է հարյուրամյակը և սկսվում է նոր դարաշրջան։ Ամեն անգամ նման շրջափուլերում, նաև երկրորդ հազարամյակի նախաշեմին, մեր նախնիները, ինչն ակնբախ է մի շարք վիմագրերից, սպասել են Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին, հետևապես՝ մեռյալների հարությանը, նրանց և տվյալ պահին ողջերի ահեղ դատաստանին, հավերժական տանջանքներին ու հավիտենական կյանքին։ Իսկ նման ժամանակներում նախապաշարված հավատացյալների կրոնական զգացմունքներից ճարպկորեն օգտվել են խաբեբաները՝ սուտ ու կեղծ, ինքնահռչակ մարգարեները, հրաշագործ բժշկության երկնային զորությամբ օժտված «սքանչելագործները»։ Հենց այդպիսի ժամանակներում այդ «ընտրյալների» «փրկչական», աստվածային «բժշկությունների» քարոզչական և աշխույժ գործունեության համար են ասված Հովհաննես ավետարանչի այն խոսքերը, որ ըստ նրա Ընդհանրական Ա թղթի Բ 18-ի, հղում է Հովհան Օձնեցին պավլիկյանների պարագայում. «Բազումք են ելեալ յաշխարհ նեռինք, որով մարթեմք իմանալ թէ յետին ժամանակ է»[3]։

---

[1] **Սիմեոն Երևանցի**, Ջամբռ, 2003, էջ 404։

[2] «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», Երուսաղէմ, 1915, էջ 447։

[3] **Յովհան Օձնեցի**, Նորին ընդդէմ պաւղիկեանց, «Մատենագիրք հայոց», հ. Է, Անթիլիաս, 2007, էջ 37։

Նմանապես, Կիրակոս Գանձակեցին, հայտնելով հայոց մեծ թվականի հաշվարկով VII դարավերջին՝ ՈՂԹ՝ 699 (1250) –ին Արցախի Վայկունիք գավառի Ծար գյուղում աղանդավորական գործունեություն ծավալած Դավիթ Մոլորեցուցչի մասին, իր «Պատմութեան» ԽԸ (48-րդ) գլխի շարադրանքն սկսելով «Կատարած աշխարհիս մօտեալ է, և վասն այնորիկ կարապետք նեռինն բազմացան» գնահատմամբ, շարունակում է նորկտակարանյան զգուշացմամբ. «որպէս յառաջնագոյն ասաց կենարարն», թէ՝ «Մերձ ի կատարածն յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք տալ նշանս և արուեստս դիւականս, մինչեւ մոլորեցուցանել, թէ հնար ինչ իցէ, և զընտրեալսն»[1] (Մատ. ԻԴ. 24, Մատ. ԺԳ. 22)։

Ընդ որում, աղանդաստեղծ ջրաղացպան Դավթին նույնպես երևացել էր սատանան, բայց ոչ թե Գաբրիել հրեշտակապետի տեսքով, այլ որ ավելի վատթար է՝ Հիսուս Քրիստոսի լուսեղեն կերպարանքով[2]։ Այս կապակցությամբ Կիրակոս Գանձակեցին հարկ է համարում մեջբերել Դավիթ Մոլորեցուցչի դեմ գրած իր ուսուցչի՝ նշանավոր Վանական Տավուշեցի վարդապետի հետևյալ նախազգուշացնող խոսքերը, որոնք տեղին են նաև Սերկևիլի աղանդի պարագայում. «Ընդէ՞ր զերևումն դիւին՝ Քրիստոսի համարիք, ո՛վ քրիստոնեայք. զի և սատանայ սովոր է կերպարանիլ ի հրեշտակ լուսոյ»[3]։

Ե. Տեր-Մինասյանը, անդրադառնալով պատմական աղանդների ծագման պատճառներին, միանգամայն բնական է համարում «նրանց աշխուժացումն ամեն անգամ, երբ սրվում են հասարակական հարաբերությունները, շատանում են ճնշումները ու հարստահարումը»[4]։

Իսկ Սերկևիլի աղանդի երևան գալու պատճառներից էին XVI դ. թուրք-պարսկական պատերազմները, օսմանցիների դեպի Հայաստան ու Անդրկովկաս «Պարբերաբար կրկնվող արշավանքները, կոտորածն ու գերեվարությունը և սրանց հաջորդող սովն ու մահտարաժամը ամայացնում էին Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, ոչնչացնում արտադրողական ուժերը։ Թուրք զինված հրոսակախմբերը մորեխի պես ընկնում էին հայկական կանաչ դաշտերի վրա, լափում ու չորացնում նրանց կենսաբեր ծիլերը»[5]։

---

[1] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 321:

[2] Նույն տեղում, էջ 322-323:

[3] Նույն տեղում, էջ 326:

[4] **Ե. Տեր-Մինասյան**, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 5:

[5] «Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հ. IV, Երևան, 1972, էջ 87: Այսուհետև՝ ՀԺՊ, IV:

Նման օրհասական պահերին ծանր իրավիճակից դուրս գալու ելքը մարդը կապում է վերերկրային զորավոր ուժերի, Փրկչի օգնության հետ, ինչից էլ վարպետորեն օգտվում են ինքնահռչակ «մարգարեները»: Գրիգոր Դարանաղցին շարունակում է, որ Սերկևիլի գեղջկուհին իր առաքելության և ի վերուստ իրեն տրված կոչման մասին սկսեց քարոզել գյուղում և շրջակայքի բնակավայրերում՝ իրենց բակում «զարդարելով զծառն շուրջանակի, ճրագարանի և մոմավառի տեղի պատրաստել եւ խնկարանի եւ զենարանի»[1]:

Ե. Տեր-Մինասյանի դիտարկմամբ. «Աղանդների ծագումը պետք է հասկանալ և իմաստավորել որպես հեթանոսական աշխարհայացքի վերակենդանացում և արտաքին աշխարհի գաղափարների ներթափանցում, երբեմն նույնիսկ ներխուժում քրիստոնեության մեջ»[2]:

Սերկևիլցի աղանդավորուհու բակում հատուկ պատվի արժանացող ու զարդարվող ուռենին ունի իր հեթանոսական ծառապաշտական արմատները: Մովսես Խորենացին գրում է, որ Արմավիրում «զսաղարթուցն սօսաւիւն, ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օդոյն, և թէ ուստի շարժումն՝ սովորեցան ի հմայս յաշխարհիս Հայկազանց, և այս ցբազում ժամանակս»[3]:

Հովհան Օձնեցին ավելացնում է՝ պավլիկյանները «...յերկրի առ փայտն աղաղակել վարդապետէր՝ հայր իմ ես դու, եւ քարին՝ քո իսկ ծնեալ է զմեզ. եւ ի վերայ լեռանց և բլրոց հրամայէր զոհել ի ներքոյ կաղնեաց եւ կաղամախեաց եւ վարսաւոր ծառոց»[4]:

Ներսես Շնորհալին, հայտնելով արևորդիների կողմից բարդու պաշտամունքի մասին, այդ աղանդավորներին կոչ է անում «զբարտի ծառն մի աւելի պատուէք քան զուռին և զկաղամախին, և զայլս ի ծառոց. և մի կարծէք թէ փայտ խաչին Քրիստոսի բարտի էր. ստութիւն է այդ և խաբէութիւն սատանայի որ մոլորեցոյց զձեզ, և եհան յԱստուծոյ: Քանզի այդ ծառ որ բարտի անուանի՝ ի կռապաշտութեան ժամանակն ի պաշտօն առեալ էր նոցա... և ոչ միայն աւելի պատիւ մի դնէք բարտի ծառոյն քան այլ ծառոց, այլ և անարգ համարեցէք զնա քան զայլ ծառս, որով և սատանայ անարգեսցի»[5]:

---

1 **Գրիգոր Դարանաղցի**, նույն տեղում:

2 **Ե. Տեր-Մինասյան**, նշվ. աշխ., նույն տեղում:

3 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց», աշխ. Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 64:

4 Տե՛ս **Հովհան Օձնեցի**, նշվ. աշխ., էջ 41: Քարից ծնված լինելու մոլորությունը պավլիկյաններին անցել է միհրականությունից:

5 Թուղթ ի Սամոստիա քաղաք յաղագս Արևորդացն դարձի, «Տն Ներսեսի Շնորհալիոյ Հայոց կաթողիկոսի նամականի», Վենետիկ, 1838, էջ 243-244:

Հեթանոսության շրջանում հայերի պաշտած սոսի, կաղնի, կաղամախի, բարդի, ուռի ծառերից արդեն քրիստոնեության ժամանակ մասամբ ընդունելի է եղել վերջինս։

Ըստ Ս. Մկրտչյանի՝ ուռենին հայ քրիստոնեության մեջ կարևորվում է Ծաղկազարդի տոնին, որ կապված է Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ այցելելու հետ, որի ժամանակ ժողովուրդը նրան դիմավորեց ձիթենու ոստերով[1]։ Քանի որ Արևելյան Հայաստանում ձիթենի չի աճել, հետևապես Ծաղկազարդին օգտագործել են ուռենու ճյուղերը։ «Տոնի գլխավոր բաղադրիչը սրբազան ոստի (ձիթենու և հատկապես ուռենու) հետ կապված ծիսաշարն է։ Եկեղեցիները զարդարվում էին ուռենու ճյուղերով և ձիթենու ոստերով՝ ավելի իմաստալից դարձնելու Հիսուսի մուտքը Երուսաղեմ»[2]։

Ավետարանիչներից Մատթեոսն ու Մարկոսը, նկարագրելով Տիրոջ մուտքը սրբազան քաղաք, պատմում են, որ մարդիկ իրենց զգեստներն էին փռում, ծառերի ճյուղերն էին կտրում և սփռում Հիսուսի ճանապարհի վրա (Մատթ. ԻԱ. 8, Մարկ. ԺԱ. 8)։ Բայց ինչ ծառի ճյուղեր էին կտրում, չեն հաղորդում։ Ղուկասը, կրկնելով, թե մարդիկ իրենց զգեստները փռում էին ճանապարհի վրա, շարունակում է, որ Հիսուսը մոտենում է Ձիթենյաց լեռան զառիվայրին (Ղուկ. ԺԹ. 36-37), ինչից ենթադրելի է, որ ծառերը կարող էին նաև ձիթենիներ լինել։ Ավետարանիչներից միայն Հովհաննեսն է ասում, թե ժողովուրդը արմավենիների ճյուղեր վերցրեց և Հիսուսին ընդառաջ ելավ (Հովհ. ԺԲ. 13)։ Հետևապես օգտագործվել են և՛ ձիթենու, և՛ արմավենու ճյուղեր։

Ըստ Ս. Մկրտչյանի՝ «Անցյալում ձիթենին և արմավենին համարվում էին խաղաղության ու փառքի խորհրդանիշներ։ Ձիթենու պսակով էին Հունաստանում զարդարել օլիմպիական հերոսներին, իսկ արմավենին՝ ձոնել արեգակին։ Հայոց ավանդական կենցաղում նմանատիպ հատկություններ էին վերագրվել սոսիներին և ուռենիներին։

Օրհնված ոստերի և ճյուղերի մեջ ժողովուրդը տեսնում էր խորհրդավոր ուժ, որն ուներ բերք ու բարիք շնորհելու հմայական զորություն»[3]։

Սերկևիլի գեղջկուհի աղանդապետը գյուղացիներից և ուխտավորներից ընտրել էր հսկայազոր երիտասարդներ, որոնց զինել էր հաստ ու երկար բիրերով՝ «վասն զընդդիմակս իւր հարկանելով»[4]։ Գրիգոր Դարանաղցին չի նշում այդ կամակատար երիտասարդների թիվը։ Գուցե տասներկու՞։ Զաքարիա Քա-

---

[1] **Ս. Մկրտչյան**, Տոներ, Երևան, 2010, էջ 73։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 73-74։

[4] **Գրիգոր Դարանաղցի**, Ժամանակագրություն, էջ 447-448։

նաքեռցին, խոսելով Սերկևիլի աղանդից ոչ շատ հետո Արցախում ծագած և Արարատյան աշխարհում ծավալված աբեղահալածական շարժման մասին, գրում է, որ դրա հիմնադիր Մեխլուն իր հետևորդներից «ընտրեաց ԲԺ կտրիճ և զօրեղ մարդիկք, և ետ ի ձեռս նոցա լախտ՝ որ է թօփուզ, և կապեաց թուրս զմիջօքն նոցա, և անուանեաց զնոսա առաքեալս... և հրամայէր նոցա առնել՝ զոր ինչ ինքն կամէր. թէ ծեծեր, թէ կալանս առնէր նոքօք առնէր զամենայն»[1]:

Գեղջկուհին երիտասարդներին ընտրելիս, իսկ սրանք «սիրով գային հնազանդէին նմա իբր երեւելի ոմն ի ծառայութիւն», նրանց տանում էր, ուռենու առջև կանգնեցնում և հայտնում, որ ըստ հին օրենքի՝ հոբելյանական տարեթվին Աստծո հրամանով ծառաներին ազատություն է լինում[2]: *Նրանցից նա, ով իր տիրոջը հաճոյանալու համար չի կամենում ելնել ծառայությունից, դռան ներքին շեմին կտրում են նրա ականջից, որպեսզի հավիտենական ծառա մնա*[3]:

Այդ կնոջ համբավն այնքան է տարածվում, որ սկսում են նրան այցելել բազմաթիվ ուխտավորներ՝ «ղուրպանօք (զոհաբերվող կենդանիներով)-Ա.Մ.), խնկովք և մոմովք եւ ձիթովք եւ այլ նոիրաւք»[4]:

Նման նվերներով ժամանակին ուխտավորներն են այցելել նաև Դավիթ Ծարեցուն: Երկու դեպքում էլ ակնհայտ է մարդկանց կրոնական զգացմունքների վրա խաղալով՝ շորթությամբ զբաղվելու երևույթը: Սերկևիլցի գեղջկուհուն ծառայել են ոչ միայն ընտրված երիտասարդներ, այլև «բազում կանայք այլ ոմանք մոմալիցք, ոմանք կերակրեփիչք եւ ոմանք սպասաւորութիւն առնելով եկելոց ուխտաւորացն»[5]: *Զանազան վայրերից ժամանող հավատացյալներին գեղջկուհին տալիս էր «մասն ի կեղեւոց եւ ոստոց եւ տերեւոց յուռի ծառոյն»*[6]: *XIII դ. կեսին Դավիթ Մոլորեցուցիչը իր մոտ՝ Ծար, «ուխտագնացություն» կատարողներին նույնպես բաժանում էր «յոսկերաց զոարակին, և ի տաշեղէ խաչին, և ի հատէ կորեկոյն, որ ի ջրաղացքն, որպէս նշխարս օրհնութեան ամենայն ուխտականացն»*[7]:

Սերկևիլ գյուղում աղանդավորուհու մոտ հատկապես մեծ բազմություն է հավաքվում Զատկի Նոր կիրակիին, (ս. Հարության հաջորդ կիրակին է), որի ժամանակ հարյուրից ավելի կենդանիներ են զոհաբերվում: Զավեշտալին այն է,

---

1 «Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն», հ. առաջին, Վաղարշապատ, 1870, էջ 49:

2 **Գրիգոր Դարանաղցի**, էջ 447:

3 Նույն տեղում, էջ 447-448:

4 Նույն տեղում, էջ 447:

5 Նույն տեղում, էջ 448:

6 Նույն տեղում:

7 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 323:

որ այդ օրը «շատ քահանայք այլ սպասաւորէին նմա վասն արդեանց մտից նորա»[1]: Դավիթ Ծարեցուն նույնպես սպասավորել են քահանաներ. «Այլ և երիցունք եկին և յարեցան ի նա ընչից և զօշոտութեան աղագաւ, և կային նմա ի սպասու, լոանալով զոտս նորա և զջուրն ցանէին ի վերայ ինքեանց և ժողովոցն բազմութեան»[2]:

Բնականաբար, ծավալվող մոլար խանդավառանքը չէր կարող աննկատ մնալ: Սերկևիլ գյուղի ավագերեց Հայրապետը, որը իմաստագույն մարդ էր, հանդիմանում է աղանդավոր կնոջը՝ անաստված մոլորության համար, բայց գեղջավագի ու համագյուղացիների պաշտպանությամբ հազիվ է փրկվում ականջներին նշան դրված, մոլեգնած հսկայազոր երիտասարդների ձեռքով սպանվելուց: Ժամանակին Դավիթ Մոլորեցուցչի օգնականները նույն կերպ են փորձել վարվել իրենց աղանդապետի դեմ պայքարող հոգևորականների հետ[3]:

Հայ աղանդավորության պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աղանդի ծագման ժամանակ, եթե լինում են մտահոգ գործիչներ, ապա նրանք մարում է իրենց խանձարուրում: Բարեբախտաբար, XVI դարավերջին Սաղմոսավանքում, որի թեմական վիճակում էր գտնվում Սերկևիլ գյուղը, առաջնորդն էր նշանավոր Սարգիս Արենցի ճգնավոր եպիսկոպոսը: Նա գալիս, հանդիմանում է աղանդավորուհուն, նրա սպասավորներին մի կերպ դարձի բերում խրատներով, ավետարանով ու խաչով և «ցրոելով զամենայն պատրաստութիւն նոցա եւ զճրագունսն զամենայն ի ձորն ի վայր հոսելով եւ հազիւ խափանելով զնա»[4]: Գրիգոր Դարանաղցին հայտնում է, որ ինքն էլ է շատ մաքառել Սերկևիլի աղանդավորների դեմ, նախատել նրանց[5]: Պատմիչի հաղորդելով՝ լով՝ աղանդավորուհին իր գործունեությունը կասեցնելուց հետո էլ՝ շուրջ երկուսուկես տարի, գաղտնաբար սպառնացել է իր համագյուղացիներին՝ շահարկելով նրանց կրոնավախությունը[6]: Բայց երբ նրան Սերկևիլի եկեղեցու առջև, հավաքված բազմության ներկայությամբ, որոշել են ամբողջ տնով հանդերձ արտաքսել գյուղից, նա և իր ընտանիքի անդամները «եկեալ զղջացեալ խոստովան եղեն զմոլորութիւն իւրեանց եւ առին կանոն ապաշխարութեան»[7]:

---

1 **Գրիգոր Դարանաղցի**, նույն տեղում:

2 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 326:

3 Նույն տեղում, էջ 327:

4 **Գրիգոր Դարանաղցի**, էջ 448-449:

5 Նույն տեղում, էջ 449:

6 Նույն տեղում:

7 Նույն տեղում:

Գրիգոր Դարանաղցին Սերկևիլի աղանդի պատմությունն ավարտում է ուռենու կործանմամբ. «Եւ ապա յետ աւուրցն այնոցիկ մեծապանչ իրագործեցաւ ի հրամանէն Աստուծոյ, որ հնչեաց հողմն ուժգին ի ծառն եւ խլեաց զնա յարմատոյն եւ վերացոյց եւ ընկեց ի ձորն իբրև զփալկոնն, եւ որք տեսին եւ լոան՝ հիացեալ փառս ետուն Աստուծոյ»[1]:

Ամփոփելով՝ ավելորդ չենք համարում հավելել, որ Սերկևիլի աղանդը հայ միջնադարյան իրականության մեջ մեզ հայտնի երկրորդ հերձվածն է, երբ պարագլուխը կին է հանդիսանում: Առաջինի վերաբերյալ միակ աղբյուրը հայ ունիթոր պատմիչ Մխիթար վարդապետ Ապարաներցու (XIV դ. կես- XVդ. սկիզբ) «Գիրք ուղղափառաց ըստ կաթոլիկէ սուրբ եկեղեցւոյն ընդդէմ հերձոածողաց» աշխատությունն է, որտեղ հեղինակը խոսում է «սատանայի մարգարե» մի կնոջ մասին՝ առանց անունը հայտնելու, ինչպես հետագայում Սերկևիլի աղանդի պարագայում Գրիգոր Դարանաղցին: Այդ աղանդավորուհին մի քանի ամիս գործել է Վասպուրականում՝ իր շուրջը համախմբելով ուրիշ կանանց, և գտնվել են մարդիկ, որոնք հետևել են նրանց «վասն նոցա սուտ և սատանայական սքանչելեացն»[2]:

ՍԵՐԿԵՎԻԼ ԳՅՈՒՂԻ ԱՂԱՆԴԻ ՄԱՍԻՆ

Աշոտ Մանուչարյան

Բանալի բառեր՝ *Սերկևիլ, գյուղ, աղանդ, կին, հարյուրամյակ, քարոզ, սատանա, Գաբրիել, հրեշտակապետ, ուռենի, զարդարել, ուխտավոր, երիտասարդ, հոգևորական, խրատ:*

1599 թ. Արագածոտն գավառի Սերկևիլ գյուղում ծագում է աղանդ, որը կին էր գլխավորում: Պատմիչ Գրիգոր Դարանաղցին, որ միակ աղբյուրն է, չի հայտնում այդ կնոջ անունը: Թվականից երևում է, որ հարյուրամյակը վերջանում էր և սկսվում էր նոր դարաշրջան: Ըստ մի շարք վիմագիր սկզբնաղբյուրների՝այդպիսի շրջափուլերում մեր նախնիները սպասել են Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին, մեռյալների և ողջերի Ահեղ Դատաստանին: Նման ժամանակներում գտնվել են ճարպիկ խաբեբաներ, որոնք վարպետորեն օգտվելով հավատացյալների կրոնական զգացմունքներից, փորձել են անձնական շահեր կորզել՝ իրենց հռչակելով մարգարեներ, երկնային կոչում ունեցողներ:

Սերկևիլի աղանդավորուհին զարդարում է իրենց բակի ուռենին, քարոզում, թե Գաբրիել հրեշտակապետը, որը հանդիսանում է մահվան տերը, իրեն ընտրել է, եթե նա մեկի համար խնդրի, մահ չի տեսնի: Նրա մոտ մեծ թվով ուխտավորներ են գալիս՝ բազմապիսի նվերներով, զոհաբերվող կենդանիներով: Աղանդավորուհուն սպասավորում էին հուժկու երիտասարդներ, շատ ուխտավորներ, անգամ հոգևո-

---

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս ՀԺՊ, IV, էջ 79:

րականներ: Աղանդն աննկատ մնալ չէր կարող: Նրա դեմ պայքարել ու աղանդավորներին դարձի է բերել Սաղմոսավանքի առաջնորդ, նշանավոր Սարգիս Արենցի ճգնավոր եպիսկոպոսը:

О СЕКТЕ СЕЛА СЕРКЕВИЛА

Аанучарян Манучарян

Ключевые слова: *Серкевил, село, секта, женщина, столетие, проповедь, сатана, Гавриил, архангел, ива, украшать, паломник, молодой, священник, наставление.*

В 1599 г. в селе Серкевил провинции Арагацотн возникла секта, главарей которой была женщина. Историограф Григорий Даранагский, который является единственным источником, не сообщает имя этой женщины. По дате можно судить, что события происходили на рубеже нового столетия. По данным некоторых лапидарных первоисточников на таких «пороговых» исторических стадиях наши предки ждали Второго Пришествия Исуса Христа, Страшного Суда мертвых и живых. В подобные времена находились ловкие жулики, которые мастерски пользуясь религиозными чувстами верующих, пытались получить личные выгоды, провозглашая себя пророками, избранниками, имеющие небесное предназначение.

Сектантка Серкевила украшает иву в своем дворе, проповедует, что архангел Гавриил, который является хозяином смерти, избрал ее и если она попросит за кого-то, тот не увидит смерть. К ней приходили очень многие паломники с различными подарками и животными для жертвоприношения. Сектантке прислуживали могущие молодые люди, многие паломники, даже священники. Секта не могла бы остаться незамеченной. С ней боролся и сектантов направил на истинный путь глава епархии Сагмосаванка, известный епископ отшельник Саркис Аренский.

ON THE SECT IN THE VILLAGE OF SERKEVIL

Ashot Manucharyan

Keywords: *Serkevil, village, sect, woman, preach, devil, Gabriel, Archangel, willow, decorate, pilgrim, young, clergyman*

In 1599 a sect developed in the village of Serkevil in Aragatsotn province, which was headed by a woman. The historian Grigor Daranaghtsi, whose work serves to be the only source for the information, does not mention the name of that woman. The date shows that the century was coming to the end and the new era was beginning. Due to several inscriptions our ancestors were looking forward to Jesus Christ's Second Coming and Last Judgment of the dead and live people. There happened to be people who acted as cheats, who masterly making use of the religious feelings of the faithful and proclaiming themselves as prophets or creatures sent from Heaven tried to withdraw personal profits.

The sectarian decorated the willow in the yard, preached that Gabriel Archangel, who was the Master of Death, had chosen her and if she asked Him He would grant life. A lot of pilgrims came up to her taking various presents to her. Many young people, a lot of pilgrims and even clergymen were serving her. Sarkis Arentsi the bishop of Saghmosavank Monastery started to fight successfully against the sect and returned the sectarians to their real faith.